ՀՀ Արարատի մարզ
Մասիս քաղաք
Մեսրոպ Մաշտոցի անվան
№1 հիմնական դպրոց
ՊՈԱԿ

Republic of Armenia
Ararat region, city Masis
Sc. N. 1 after
Mesrop Mashtots

Հեռախոս. 4.27.32
e-mail: masis1@schools.am
ինտերնետային էջ: http:// masis1.schoolsite.am

No _____

"____" _____ 2024

«Լիդեր Սերվիս»ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Սմբատ Ղազարյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մ. Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Լիդեր Սերվիս» ՍՊԸ –ի միջև 12.07.2024 թ. կնքված N ՄՀԴ-ԳՀԱՊՁԲ-24/02-02 ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագրի կատարման վերջնաժամկետն է ս/թ դեկտեմբերի 25-ը:

Սակայն պայմանագրով սահմանված ժամկետում ստանձնած պարտավորությունները Ձեր կողմից չեն կատարվել՝ սեպտեմբերի 14-ին ուղարկված պատվերը սեպտեմբերի 17-ի համար չի կատարվել, մինչ այդ էլ պարբերաբար խախտվել են սննդամթերքի մատակարարման ժամկետները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 2.1.7 կետը, 8.8 կետ՝ «ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մ. Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը միակողմանիորեն լուծում է «ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մ. Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Լիդեր Սերվիս» ՍՊԸ –ի միջև 12.07.2024 թ. կնքված N ՄՀԴ-ԳՀԱՊՁԲ-24/02-02 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը պատվիրատուի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Լիդեր Սերվիս» ՍՊԸ –ին տրվում է 10 (տասը) օրացուցային օր տուժանքներով սահմանված որակավորման 78696 (յոթանասունութ հազար վեց հարյուր իննսունվեց) և պայմանագրի 52464 (հիսուներկու հազար չորս հարյուր վաթսունչորս) դրամ ապահովումների գումարները «ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մ. Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Կենտրոնական գանձապետարանի 900438000284 հաշվեհամարին փոխանցելու համար:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն «Լիդեր Սերվիս» ՍՊԸ –ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին, ինչպես նաև կդիմենք ՀՀ Առաջին ատյանի դատարան՝ նշված գումարները դատական կարգով գանձելու համար:

Տնօրեն՝ Է. Այվազյան